

րիքիս պատճառաւ՝ լրջութեամբ չէ առնուեր, եւ Սրբազանը կարեւոր չէր նկատեր ինծի համար այդ խիստ հետաքրքրական եւ նիւթիս համար ամենակարեւոր հայ յիշատակարանով գորգը ցոյց տալ: Տարիներ վերջ Ամերիկայի մէջ ինծի կը յայտնէր գորգին գոյութեան մասին, աւա՛ղ, առանց յիշելու յիշատակարանը կամ անոր ամփոփումը:

Այժմ ինծի համար անկարելի է ըսել թէ որեւէ առնչութիւն կա՞յ էվլիայի յիշած հրաշագործ եւ նուիրական գորգին ու Գարեգին Սրբազանի յիշատակած հայ յիշատակարանով հնամաշ գորգին միջեւ:

«Էջմիածնի մէջ, Զօպանեանի համաձայն, կար «Կապերտ», զոր եպիսկոպոսական ձեռնադրութեան ատեն կը ձգեն կաթողիկոսին ոտքերուն տակ: Արծիւը հայրապետական իշխանութեան խորհրդանշանն է»⁽³⁾:

Մահմետականները կ'արգելէին ոչ-մահմետականներուն դաշիւ, քալել կամ նստիլ իրենց անձնական կամ նուիրական գորգերուն վրայ, օրինակ՝ ճաշու, աղօթքի եւն.: Բացառութիւն մըն էր որ Շահ Օթման Ադ-Գոյունլուն Ամիրթի Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը շատ յարգելուն համար «ի վերայ իւրոյ թագաւորական խալիչային նստուցանէր»⁽⁴⁾: Նման բացառութիւններ այլուր ալ պատահած ըլլալու են՝ որոնք ինծի անձանօթ կը մնան: Baron von Haxthausen ուզելով չեչտել Կովկասի մէջ մահմետական եւ քրիստոնեայ սիրալիր յարաբերութիւնները՝ կը վկայէ որ Հայ, Վրացի, Թաթար կամ Պարսիկ «եւրեմն նոյնիսկ միատեղ նոյն գորգին վրայ կը ճաշէին»⁽⁵⁾:

(3) Հայ էջեր. — Փարիզ, 1912, էջ 109 եւ նկար թիւ 22:

(4) Հայապատում (փոքր). — Ս. Ղազար, 1901, Գ. հատոր, էջ 223:

(5) Transcaucasia. — London, 18540, p. 270.